

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՄԱՏԹԷՈՍ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ **ԷՋՄԻԱԾՆԻ**

ՇՆՈՐՀԱՋԱՐԴ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԻԼԻԿԻՈՅ ՏԵԱՌՆ ՍԱՀԱԿԱՅ, ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ԵՂԻՇԵԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ,

Գերապատիւ Առաջնորդաց, Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, Վանահարց, Միաբանական ուխտից, Բարեշնորհ քահանայից, սարկաւագաց և դպրաց, կրթական, բարեգործական, արհեստագիտական և որբախնամ և այլ ամենայն բարեպաշտական հաստատութեանց և համօրէն ըստ կարգի և ըստ աստիճանի հայազն պատուական ժողովրդոց սփռելոց ընդ երեսս երկրի՝ արանց և կանանց, ծերոց և տղա-

յոց հարազատ որդւոց Մօրս Լուսոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի ողջոյն և օրհնութիւն ի Քրիստոս Յիսուս։

Շնորհ, սէր, խնդութիւն և խաղաղութիւն ամենակալին Աստուծոյ բազմասցի ի ձեզ՝ լուսածնունդ որդւոց առաքելական ուղղափառ եկեղեցւոյ մերոյ Հայաստանեայց, որ հիմնեալն է յառաջին Լուսաւորչացն մերոց՝ սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարթուղիմէոսի և ի սրբոյ հօրէ մերմէ Գրիգորէ երկրորդ Լուսաւորչէ Հայաստանեայց, որոյ գլուխն է Տէր մեր Յիսուս Քրիստոս։

Յետ հայրապետական ողջունիս և օրհնութեանս յայտ առնեմք սիրեցեալ եղբարց մերոց և որդւոց ի Տէր եթէ՝ ազգն Հայոց՝ հոգևորականք և աշխարհիկք ի ձեռն պատգամաւորաց համազգային ժողովոյ գումարելոյ յառաջնում աւուր ամսեանն նոյեմբերի անցելոյ ամի ի Մայր Տաճարի Սրբոյ Էջմիածնի ընտրեաց և կոչեաց զիս ի պաշտօն Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց։ Թէպէտև պարտասեալ քառասնամեայ ազգային—եկեղեցական պաշտամամբ իրաւունք էր իմ այլ ևս դադարել և կալ ի հանգըստեան, սակայն իբրև ուխտադիր պաշտօնեայ Եկեղեցւոյ և Ազգի հարկ ի վերայ կայր յակամայս իսկ յարգել զմիահամուռ կամս ազգի և եկեղեցւոյ Հայոց, ուստի ի զօրութիւն Տեառն ապաստան և յուսալիր, զի ամենայն հոգևորականք, յատկաբար և միաբանական Ուխտ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի աջակից և վաստակակից ինձ եղիցին ի կարի ծանր պաշտամանս յայսմիկ, և յուսալից մանաւանդ զի ի հոգևորական, ի վարչական, ի կրթական, ի տնտեսական և այլ հոգևորապատկան գործս եկեղեցւոյ Հայաստանեայց իսկական իրաւունք Հայրապետութեան ամենայն Հայոց կացցեն և մնասցեն անվթար և ի զօրութեան իւրեանց՝ ընկալայ զպաշտօն ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց և ողորմութեամբ Աստուծոյ ընկալեալ և զհայրապետական զօծումն սուրբ յերեքտասաներորդի ամսեանն սեպտեմբերի այսր ամի՝ յաւուր տօնի Վերացման Սրբոյ Խաչին, արկի ձեռն ի գործ։

Ըստ կարգի և ըստ աստիճանի պատուական պաշտօնեայք և ժողովք, խորհուրդք և հոգաբարձութիւնք և այլն եկեղեցւոյ մերոյ և Ազգի և ժողովուրդ Հայոց, որ ի սփիւռս աշխարհի ցրուեալ՝ գիտէք ապաքէն զի ազգն Հայոց համօրէն կամի և ցանկայ միայն պահել զգոյութիւն իւր և Եկեղեցւոյ իւրոյ և զիրաւունս նորա։ Գիտէք, զի փափաքի վայելել զբարիս օրինաց և արդարութեան. սակայն հակառակ ցանկութեան և ըղձանացս այսմիկ քանիցն ծանր պայմանք շուրջ զմեօք պատեալ նեղեն և տուայտեն զԱզգ մեր և զԵկեղեցի։ Գիտէք և քաջ, զի ազգն Հայոց, ուստերք նորա և դստերք՝ որդիք քաղաքացոց և գիւղականաց կամին խաղաղ կենօք և անդորր մտօք վաստակիլ յուսմունս և ի գիտութիւնս և զարգանալ ի նոսին և ի բարոյական դաստիարակութեան, սակայն նիւթական, ֆիզիքական և բարոյական հարստահարութիւնք բեկանեն զաշխատութիւնս նոցա և զվաստակ, և գոգցես ջանք և նպատակ հարստահարչացն է զրկել խպաս զորդիս Հայոց ի մտացն լուսաւորութենէ և ի բարոյիցն ազնուութենէ և ի կրօնիցն սրբութենէ ի մեծ վնաս ժողովրդեան և Հայրենեաց։

Եւ արդ ըստ պարտուց պաշտաման իմոյ ի նկատ առեալ զայս կացութիւն տառապեալ Ազգիս և ի վերայ հասեալ իրացն հանգամանաց և զօրութեանց աշխարհի՝ յորդորեմ զձեզ զամենեսին սիրով տառապակիր Ազգիս Հայոց, փութասջիք լուսաւորել զմիտս ձեր և որդւոց ձերոց, խելամուտ լինել իսկական կացութեան Ազգին և Եկեղեցւոյ Հայաստանեայց։ Փութոյ պնդութեամբ ձեռն ի գործ արկէք զամենայն կրթական, բարեգործական, զարհեստական և զայլ հաստատութիւնս, որպէս և զեկեղեցիս և զվանօրայս պահել ի յարատև և ի բարգաւաճ վիճակի։ Փոյթ անձին ունիջիք զարգանալ ճշմարիտ իմաստութեամբ, զօրանալ բարոյական և քրիստոնէական դաստիարակութեամբ և ամրանալ հաստատուն կամօք, և լինել ընտիր ընտիր որդիք Ազգի Հայոց և Եկեղեցւոյ և բարի քաղաքացիք երկրին և Հայրենեաց։

Յորդորեմ զհամօրէն զորդիս իմ՝ զյաւէտ սիրեցեալս, զի որպէս մինչև ցայսօր՝ նոյնպէս և յետ այսորիկ լիառատ տրօք իւրեանց յօժարակամ սատարեսցեն հաստատութեանցն այնոցիկ և կրթութեան որդւոց Ազգին և որ կարողքն ի ձէնջ լինիցին մեկենաս ամենայն վաստակաւորաց վասն Ազգի և Եկեղեցւոյ։

Հրաւիրեմ զմեծատունս և զոր ընդ ամենայն երեսս երկրի սփռեալ հայորդիս, փութացէք, մխիթարեցէք և սփոփեցէք ի ձեռն անօրինաց խողխողելոցն զմնացորդս Հայոց Ադանայի և Բերիոյ, որք ի տագնապս թշուառութեան մատնեալք կան քաղցեալ, մերկ և անտուն։ Փութացէք, ասեմ, առատասրտութեամբ ձերով հասանել յօգնութիւն որբոց, այրեաց և հիւանդաց նոցին, և յանձանձել զպիտոյս նոցա և զդարման։ Գիտասջիք, զի որք բարերարենն զուարթ սրտիւ՝ զանուն և զյիշատակ իւրեանց թողուն անմահս և անմոռանալիս։ Յիշեցուցանեմ ատանօր և զբան Առաքելոյն եթէ՝ «Մեծատանց... պատուէր տաջիր զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, առատս, սիրունս և հաղորդս լինել»։ Ա. Տիմոթ. Զ. 17 և 18։

Յորդորեմ զհամօրէն հոգևորականս և զժողովուրդ Հայոց, սիրով, անկեղծութեամբ և հաւատարմութեամբ կատարել զհպատակային պարտականութիւնս ձեր ըստ իրաւանց և արդարութեան և լինել միշտ օրինասէրս և կարգապահս։ Ի բաց թողուլ և զդաղթականութիւն, զթափառելն յօտարութիւն՝ զուտիչն և զաւերիչ կենաց ձերոց և ընտանեաց և որդւոց և Ազգին իսկ զլխովին, այլ արթնութեամբ, համերաշխ և խաղաղասէր ոգւով վաստակիլ ի կանոնաւորութիւն և ի բարգաւաճումն հայրենեաց և երկրին, որոց էք որդիք և քաղաքացիք։ Ուսարուք զլեզու և զպատմութիւն և զօրէնս երկրին, զի պիտանիք են ձեզ յոյժ յոյժ իբրև հպատակաց, և հարկաւորք ի յաջողութիւն գործոց ձեռաց ձերոց և աշխատութեան, ի հայթայթանս և ի խնամարկութիւն կենաց ձերոց և ընտանեաց և որդւոց։

Յորդորեմ զամուսնացեալ՝ զարս և կանայս կեալ ընդ

միմեանս սիրով սրբութեան, համեստութեամբ և զգաստ կենօք։ Միաբան աշխատակցութեամբ բառնալ զհոգ ամուսնական կենաց և զծանրութիւն խնամոց և կրթութեան որդւոց ձերոց։ Զգոյշ լերուք, մի տայք տեղի ի ձեզ անհաճոյ դիպաց, կենակցութեան ձերոյ քայքայիչ խնդրոց, որք խռովեն զկեանս ձեր և արկանեն զձեզ և զորդիս ձեր ի պէս պէս թշուառութիւնս։

Յորդորեմ զձեզ նաև յատուկ խնամով ուսանել և ուսուցանել որդւոց ձերոց զընտիկ բարբառ մեր մայրենի, զպատմութիւն Ազգի և Եկեղեցւոյ մերոյ, զքրիստոնէական կրօն ըստ ոգւոյ Աւետարանի սրբոյ և ըստ ուղղափառ վարդապետութեան եկեղեցւոյ մերոյ Հայաստանեայց։ Յամենայն կեանս ձեր և ի պայմանի զդրոշմ, զիրաւունս եկեղեցւոյ մերոյ և Ազգի և զհնութիւնս, որ ի նախնեաց մերոց անտի, անայլայլ և անկորուստ պահեսջիք։ Որդիական երախտագիտութեամբ և պատկառոտ հաւատարմութեամբ սիրեցէք զբազմաչարչար Մայրն ձեր ալեոր՝ զսուրբ եկեղեցին Հայաստանեայց։ Սիրեսջիք զնոյն սէր և ընդ այլ ամենայն ազգային—եկեղեցական հաստատութիւնս գնուիրականն իւրով հնութեամբ և ի սփիւռս աշխարհի ցիր և ցնա եղելոյ ժողովրդեանն Հայոց զմիմիակ կեդրոնն միութեան և զկապ՝ զՄայր Աթոռն Արարատեան զԿաթուղիկէ Սուրբ Էջմիածին։ Գիտասջիք յաւէտ, սիրեցեալքդ իմ ի Տէր՝ պատուական եղբարք և լծակիցք և որդիք Հայոց, զի ի կենացն մերոց անցելոց այսոքիկ և եթ մնացեալ են մեզ խարիսխ ամրութեան յանվթար պահպանութիւն գոյութեան Եկեղեցւոյ մերոյ և Ազգի և ի պարծանս մեր և ի մխիթարութիւն։

Ի վերջոյ յիշեցուցանեմ ձեզ՝ առաջնորդացդ և հովուաց, վանահարցդ և միաբանական ուխտից, քահանայիցդ և սարկաւագաց և ամենայն սպասաւորաց սրբոյ Եկեղեցւոյ զմանաւոր պարտաւորութիւնս ձեր հոգևորականս։

Եղբարք իմ և լծակիցք ի Քրիստոս և որդիք ի Տէր, ըստ ուխտին ձերոյ, որ առաջի Աստուծոյ և հաւատացելոց,

և ըստ յօժարակամ յանձնառութեան՝ նուիրեցէք զանձինս ձեր ի սպաս պաշտաման Տեառն և ի գործ շինութեան Եկեղեցւոյ և Ազգի խղճի մտօք և անկեղծաւոր հաւատով, և վաստակեսջիք շաղկապեալք համերաշխ ոգւով և սիրով եղբայրութեան իբրև ճշմարիտ աշակերտս Քրիստոսի։ Լուարուք զինչ ասէ Տէր Յիսուս և Առաքեալն նորա Պօղոս եթէ՝ «Յայսմ գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտ էք, զի սիրիցէք զմիմեանս»։ Յովհաննէս Աւետ. ԺԳ. 35։ «Մի անփոյթ առներ զշնորհացդ, որ ի քեզ են, որ տուաւ քեզ... ի ձեռնադրութենէ երիցութեան։ Յայդ խորհեաց և ի դոյն կանխեսջիր, զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի»։ Ա. Տիմոթէոս Դ. 14 և 15։ «Գլուխ պատուիրանին սէր է, ի սուրբ սրտէ և ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց»։ Ա. Տիմոթ. Ա. 5։ «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ... և գիտիցեմ զխորհուրդս ամենայն և զամենայն գիտութիւն... և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ։ Սէր երկայնամիտ է, քաղցրանայ, ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւրն, ոչ գրգռի, ոչ խորհի զչար, ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, այլ խնդայ ընդ ստուգութիւն»։ Ա. Կորնթ. ԺԳ. 2—6։ Մի տայք տեղի գայթակղութեան ոչ փառասիրութեամբ և ոչ պճնասիրութեամբ, ոչ շռայլութեամբ և ոչ ժլատութեամբ, ոչ անարդարութեամբ և ոչ աչառութեամբ, ոչ ագահութեամբ և ոչ արծաթասիրութեամբ, զի «արծաթասիրութիւն պատճառ է ամենայն չարեաց», ասէ զիրն. այլ եղերուք մշակ առանց ամօթոյ, հեզ, խոնարհ, բարեսէր, անաչառ և արդարասէր։ Պարկեշտութեամբ կենաց ձերոց և բարեպաշտութեամբ օրինակ լերուք միմեանց և ժողովրդեանն Աստուծոյ, զի այսպէս ասէ Առաքեալն եթէ՝ «Զերիցունս այսուհետև աղաչեմ իբրև երիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի... Արածեցէք որ ՝ի ձեզ հօտդ է մի զոշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի իբրև ակամայ, այլ կամաւ. մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին»։ Ա. Պետրոս Ե. 1—3։ Վառեալ ի սէր սրբութեան կրօնից՝ փոյթեռանդն ոգւով ուսուցէք և քարոզեցէք ժողովրդեանն Աստուծոյ

զքրիստոնէական բարեպաշտութիւն և զկատարելութիւնս՝ զհաւատս, զսէր և զյոյս, զզութ, զողորմութիւն, զեղբայրսիրութիւն և զմարդասիրութիւն. ուստուցէք լինել արթունս, զուարթունս և պարտաճանաչս և պարտակատարս յամենայնի, և զոր ինչ քարոզէքդ և ուսուցանէք հաւատացելոց զնոյն ցուցջիք և յանձին ձերում ի բովանդակ կեանս ձեր և ի կենցաղավարութեան։

Պարտ է ձեզ՝ քահանայիցդ Աստուծոյ և սարկաւագաց և դպրաց, հաւատով և երկիւղածութեամբ պաշտել զեկեղեցի սուրբ և զսեղանն Տեառն, ի ժամու և ի տարաժամու հասանել ի վերայ և անթերի կատարել և լցուցանել զհոգևորական պիտոյս հաւատացելոց և մխիթարել զնոսա ի վիշտս մարմնաւորս և հոգեկանս իբրև իսկական հայր և հովիւ։ Ի միտ ածէք միշտ զբան գրոյն, եթէ՝ «Որ բարւոք վերակացու լինիցին երիցունք կրկին պատուոյ արժանի եղիցին, մանաւանդ որ աշխատիցին բանիւ և վարդապետութեամբ»։ Ա. Տիմոթէոս Ե. 17։

Տեսուչք եկեղեցացն Աստուծոյ, եղբարք իմ սիրելիք՝ զդոյշ լելուք, մի կոչէք զթանձրամիտս և զապականեալս բարուք ի պաշտօն սրբութեան և ի ծառայութիւն Տեառն և հաւատացելոց. վասն զի այնպիսիքն զԱստուած, զպաշտօնն սուրբ և զհաւատացեալս միանգամայն անարգեն և արհամարհեն։ Գայթակղեցուցանեն և զժողովուրդ Տեառն և ուծացուցանեն իսկ զնոսա յեկեղեցւոյ անտի Աստուծոյ և ի քրիստոնէական բարեպաշտութենէ։ Արկանեն ընդ ծանր պատասխանատուութեամբ առաջի Աստուծոյ և հոգևոր իշխանութեան Եկեղեցւոյ զայնոսիկ, որք ձեռն դնեն յայնպիսեացն վերայ։ Լուարուք զինչ գիրն ասէ. «Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցես և մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սուրբ պահեսջիր»։ Ա. Տիմոթ. Ե. 22։

Հուսկ ապա, սիրեցեալքդ իմ ի Տէր՝ սրբանուէր պաշտօնեայք Սրբոյ Եկեղեցւոյ և պատուական ժողովուրդ Հայոց, աղօթեսցուք հանապազ՝ ես վասն ձեր և դուք վասն

իմ, և ասասցուք ամենեքեան միաբանութեամբ ընդ սաղմոսանուագն Դաւթի. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ»։ Ամէն։

ՄԱՏԹԷՈՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յամի շնորհաց Փրկչին 1909 ի 24 Սեպտեմբերի և ըստ տօմարիս ՌՅԾԹ.

ի Հայրապետութեան մերում Ա. ամի յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի.

ի Վաղարշապատ. Թիւ 1

Հայրապետական գոհունակութիւն եւ օրհնութիւն

Կոնդակ օրհնութեան Զալալօղլեցի այրի տիկ. Նատալիա Դաւթեանցի և նորա դուստր տիկնանց՝ Շուշանիկ Նիկողայոսեանի, Զարուհի Թումանեանցի, Աշխէն Թադէոսեանի և Վարդուհի Հայրապետեանի անունով՝ տեղական եկեղեցական–ծխական դպրոցի շէնքի օգտին 7000 ռ. նուիրելու առթիւ. յունուար 10, թ. 43։

— Կ. Պոլսի Ազգ. կեդրոն. Վարչութեան քաղաքական ժողովի ատենապետի և անդամների անունով. որով օրհնում և խրախուսում է նրանց. յունուար 13, թ. 72։

— Նոյն իմաստով Կ. Պոլսի Ազգ. կենդ. Վարչութեան Կրօնական ժողովի ատենապետի և անդամների անունով. յունուար 13. թ. 73։

— Օրհնութեան Կ. Պոլսի Ս. Փրկչեան ազգ. հիւանդանոցի հոգաբարձութեան անունով, որով նաև տեղեկութիւն տրուեց նոր տարուան շնորհաւորութեան առ-

թիւ ուղարկած օրացոյցների ստացման և Ս. Էջմիածնի Սինոդից ուղարկելի 100 ռ. մասին. յուն. 15. թ. 76.

— Կ. Պոլսի Պատրիարքի անունով, որով խրախուսում և յորդորում է շարունակել պաշտօնը և կեդրոնական Վարչութեան հետ վարել ազգային գործերը. յուն. 17. թ. 86.

— Եւրոպայի առաջնորդ Տ. Գէորգ եպիսկոպոսի անունով, որով գոհունակութիւն յայտնուեց Կիլիկիայի որբերին Մանչէստրի հայերի հետ գրական օժանդակութիւն ցոյց տալու համար. յուն. 26. թ. 149.

— Մանչէստրի Բարեգործական Ընկերութեան անդամ հայ Տիկնանց անունով, որով գոհունակութիւն և օրհնութիւն յայտնուեց Կիլիկիայի թշուառներին օգնելու համար. յուն. 26. թ. 151.

— Բուլղարիայի և Ռումանիայի Պատրիարքական փոխանորդ Տ. Գրիգորիս Ծ. վարդապետ Պալաքեանի անունով, որով խրախուսուում է այցելու հովուի պաշտօնի մէջ. յուն. 27. թ. 184.

— Օրհնութեան Շուշեցի Իսահակ Թադէոսեանի անունով նոյն քաղաքի ս. Յովհաննէս եկեղեցու ծխական դպրոցին 30,000 ռ. նուիրելու առթիւ. յուն. 27. թ. 185.

Կոնդակ Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց արձակուած համարել Տ. Յովհաննէս արքեպիսկոպոս Շիրակունուն Սինոդի անդամութեան պաշտօնից և Տ. Աշոտ եպիսկոպոսին Ղարաբաղի առաջնորդութեան պաշտօնից, իրենց խնդրի համաձայն, և վերջինիս կոչել Մայր Աթոռ. յուն. 10. թ. 45.

— Վրաստանի թեմի Առաջնորդի անունով, որի հետ վերադարձնելով Ախալքալակի եկեղեցու ծխական հոգաբարձութեան ընտրութեան վերաբերեալ քննական գործն ու բողոքները, որոնք անհիմն էին, պատուիրուեց հաստատել նորընտիր հոգաբարձուներին. յուն. 11. թ. 52.

— Տփխիսի Ներսիսեան թեմական դպրանոցի հոգաբարձութեան անունով, որով հաստատուեց հոգաբարձութեան որոշումը նախկին ուսուցիչ Լևոն Թիւսիկեանի կենսաթոշակի խնդիրը մերժելու մասին. 11. թ. 54։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց ուղարկել Կ. Պոլսի Ս. Փրկչի ազգային հիւանդանոցին 100 ռ. նպաստ. յուն. 13. թ. 67։

— Պ. Բաղդասար Դոլուխանեանի անունով, որով յանձնարարուեց՝ կամ անձամբ գալ Մ. Աթոռ և կամ մի մասնագէտի հետ ուղարկել իւր լիազօրը, որպէս զի վանքապատկան հողերի ռոգման հարցը վերջնականապէս վճռուի. յուն. 13. թ. 71։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց Մայր Աթոռի հաստատութիւններից մի քանիսի հաստատած ծախքի նախահաշիւն ի գործադրութիւն և պահանջուեց Վանական Կառավարութեան, ագարակի և առհասարակ Մ. Աթոռի վիճակային, կալուածական և այլ եկամուտի ճշտիւ պատկերն ու տեղեկագիրը. յուն. 17. թ. 94։

— Վրաստանի թեմի Առաջնորդի, Ատրպատականի թեմի կառավարչի և Ղարաբաղի թեմի Առաջնորդի անունով, որով պատուիրուեց ներկայացնել Սինոդին կոնսիստորիաների, Հոգ. Կառավարութիւնների և վանքերի նախահաշիւները. յուն. 20. թ. 108—110։

— Ռուսաստանի թեմական Հայոց Առաջնորդների անունով, որով հրահանգուեցաւ տրուեց Ցաճկահպատակների պսակը Ռուսաստանում թոյլ տալ այն ժամանակ միայն, երբ կներկայացնեն իրանց առաջնորդից վկայական իրանց ամուրիութեան և որևէ այլ արգելք չլինելու մասին. յուն. 22. թ. 113—119։

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով Տ. Խաչիկ Ծ. վարդապետը վերահաստատուում է Զուարթնոցի վանահայրութեան պաշտօնի մէջ և պատուիրուում է տալ

ժապաւինեալ մատեան վանուց մուտքն ու ելքը գրելու համար. յուն. 22. թ. 122.

— Նոյն Սինոդի անունով, որով առաջադրում է կարգել Տ. Իսահակ վարդապետին Հին Խրիմի Ս. Խաչ վանքի վանահայր, Արտակ վարդապետին՝ Սինոդի դանձապահ և Տ. Ներսէս վարդապետ Մ.-Թանգեանին կանչել Մայր Աթոռ. յուն. 24. թ. 141.

— Ջալալօղլեցի այրի Տիկ. Նատալիա Դաւթեանցի անունով, որով կարգուեց տեղական ծխ. դպրոցի հոգաբարձութեան պատուաւոր անդամ՝ 7000 ռ. դպրոցի շինութեան օգտին նուիրելու համար. յուն. 24. թ. 142.

— Տ. Բենիկ վարդապետի անունով, որով կարգուեց Ղարաբաղի կոնսիստորիայի նախանդամ. յուն. 26. թ. 143.

— Վրաստանի թեմի Առաջնորդի անունով, որով իրաւունք տրուեց հանգուցեալ Գէորգ Գրիգորեանի և Կատարինէ Փրիդոնեանի ժառանգներին մահարձան կանգնել իրանց հանգուցեալ ծնողների վրայ. յուն. 27. թ. 182.

— Շմաւոն քահ. Բորեանի, Աւետիք քահ. Շահսուվարեանի և պ. պ. բժշկապետ Գ. Մելիք-Բեկլարեանի, Ա. Տ. Սահակեանի, Ի. Խոջայեանի, բժ. Վ. Ադիբէգեանի և Ն. Մամիկոնեանի անունով, որով հաստատուում են Գանձակի աղքատանոցի հոգաբարձութեան պաշտօնի մէջ. յուն. 27. թ. 183.

— Ռուսաստանի Հայոց կոնսիստորիաների և Մ. Աթոռի վանական հաստատութիւնների անունով, որով պատուիրուեց առաջիններին շուտով ուղարկել Սինոդ եկեղեցիների և վանքերի անշարժ և շարժական գոյքերի ցուցակը, իսկ երկրորդներին իրանց շարժական գոյքերի ցուցակը. յուն. 28. թ. 187—197.

— Պարսկա-Հնդկաստանի Առաջնորդի անունով, որով տեղեկութիւն տրուեց հանգ. Սարգիս Գ. Մկրտումեանի կատկի վերաբերեալ վիճակահանութեան տոմսերի, տոկոսաբեր թղթերի և գրութիւնների ստացման մասին.

այլ և ուղարկուեց 136 անգ. ոսկի արժողութեան մի փոխանակագիր փոխելու Նորին Սրբութեան անունով. յուն. 28. թ. 199.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով պատուիրուեց ուղարկել Տ. Եղնիկ արքեպիսկոպոս Ապահունուն 100 ռ. նպաստ. յուն: 31. թ. 209:

— Ատրպատականի Առաջնորդի անունով, որի հետ ուղարկուեցին ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի կալուածագրերի վաւերական պատճէնները Հասան աղա Մէմէդովի դէմ դատ բանալու համար, որը վանքի հողի միջով առու է տանելու. յուն. 31. թ. 221.

— Կ. Պոլսի Պատրիարքի անունով, որով յանձնարարուեց հոգալ Տ. Եղնիկ արքեպիսկոպոսի տնտեսական վիճակը. յուն. 31. թ. 227:

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկուեց 80 ռ. 46 կ. Յովհաննէս Կիւմշեանի կտակած գումարի տոկոսը. փետրվ. 4. թ. 246:

— Նոյն Սինոդի անունով, որի հետ ուղարկուեց Նոր Ջուղայի եկեղեցիներից ստացուած Մայր Աթոռի 86 ռ. 65 կ. գանձանակագրամը. փետրվ. 8. թ. 269:

— Երևանի Թեմական Խորհրդին, որով թոյլ տրուեց Թեմում եղած վանքերի կառավարութեան համար հրահանգ մշակել և ուղարկել ի հաստատութիւն Նորին Սրբութեան. փետրվ. 9. թ. 304:

— Տփխիսի Նպաստամատոյց Յանձնաժողովի անունով՝ Վարագայ վանքի դպրոցի օգտին մասնաւոր ժողովարարութիւն անելու մասին, փետրվ. 11. թ. 321:

— Տփխիսի կոնսիստորիայի անունով՝ Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու հոգաբարձութիւնից 8027 ռ. 43 կ. դրամը պահանջելու և Ս. Էջմիածնի Սինոդին մատուցանելու մասին, ի հաշիւ որպիսի գումարի պահւում են սաներ Մայր Աթոռի ճեմարանում յանուն Կարապետ եպիսկոպոսի. փետրվ. 11. թ. 322:

— Տփխիսի հայ արկածեալների նպաստամատոյց ճանձնաժողովի, որով պատուիրուեց մատուցանել իւր գործունէութեան և նպաստի շրջանառութեան մասին հաշիւ. փետրվ. 12. թ. 336.

— Ս. Էջմիածնի Սինոդի նախանդամ Տ. Դէորդ արքեպիսկոպոս Սուրէնեանի անունով, որով յանձնարարուեց միաբանական ժողով գումարել և ընտրել Մայր Աթոռի հաստատութիւնների համար պակաս պաշտօնեաներ և քննել ագարակի պահելու կամ չպահելու խնդիրը. փետրվ. 12. թ. 338.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով Եղիշէ ծ. վարդապետ Զիլինկերեանին եպիսկոպոս ձեռնադրելու մասին. փետրվ. 15. թ. 352.

— Ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկուեց Մեսրովբ Աբովեանի դրամական հաշիւները և պատուիրուեց պահանջել նրանից 696 ռ. 7 կոպ. փետրվ. 15. թ. 353.

Կոնդակ ցաւակցութեան և օրհնութեան հանգուցեալ անձնուէր հասարակական գործիչ Գրիգոր Ամիրեանցի այրի կնոջ և զաւակների անունով առաջնի մահուան առթիւ. փետրվ. 12. թ. 337.

Հայրապետական պարգեւատրութիւններ.

Կոնդակ Տ. Գրիգորիս ծ. վարդապետ Պալաքեանի անունով, որով շնորհուեց իրաւունք կրելու ականակուռ լանջախաչ. 10 յունուար. թ. 47.

— Կ. Պոլսի Պատրիարքական փոխանորդ Տ. Ղևոնդ ծ. վարդապետ Դուրեանի անունով նոյն իմաստով. յուն. 10. թ. 48.

— Բրուսայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Յովհաննէս եպիսկոպոս Արշարունու անունով, որով շնորհուեց արքութեան տիտղոս. յուն. 10. թ. 49.